ՆԿԱՐԻՉ-ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ ԱԲՐԱՀԱՄԸ

ԱՍՏՂԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

XV դարի հայ փայտագործական արվեստի երևելի հուշարձաններից մեկը Սևանի Առաքելոց վանքի զարդաքանդակ դուռն է, որն այժմ պահվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում։

Դուռն ուսումնասիրող մասնագետները (Մ. Կյումուշխանեցի, Հ. Շահխաթունյան, Ղ. Ալիշան, Մ. Սմբատյան, Ե. Լալայան, Կ. Կոստանյան, Ե. Շահադիզ) հիմնականում ուշադրություն են դարձրել նրա արձանագրությանը, որտեղ հիշված են դուռը կերտող անձանց անունները և կերտելու ժամանակը։ Գիտնականները արձանագրության թվականը կարդացել են թեև տարբեր ձևով, բայց բոլորն էլ վերագրել են XVI դարին՝ 1522, 1557, 1559 թթ.[1]։ Թվականների անհամաձայնությունը դժվարացրել է արձանագրությունում հիշատակված անձանց իսկությունը որոշելու գործը, մանավանդ որ, ինչպես կտեսնենք, դուռը պատրաստվել է ոչ թե XVI, այլ՝ XV դարում։

Արձանագրությունը և զարդաքանդակը հետաքրքրել է նաև Գ. Հովսեփյանին։ «Սևանի Առաքելոց վանքին հարավային դուռը» խորագիրը կրող ուսումնասիրության մեջ նա համոզիչ մեկնաբանմամբ ու բանասիրական ճշգրտումներով որոշել է դռան ստեղծման ժամանակը՝ 1486 թ.[2]։ Դրա շնորհիվ ճշգրտվել են նաև դուռն ստեղծող անձնավորությունները, որոնց մասին արձանագրության մեջ ասվում է.

ՋՀԱ* թուականի
ԼԸ թիւ աւելի
Յաթոռակալութեան տեառն Սարգսի
Ի խանութե Յաղուպ բեկի
Ծաղկեցաւ դուռն տաճարիս
Առաքելոցն Քրիստոսի
Հրամանաւս վարդապետի
Եռամեծիս Դանիէլի
Եւ սիրելի որդոյ սորին
Եպիսկոպոս տէր Ներսէսի
Զեռամբ սորին աշակերտի
Անարժանիս Արրահամի
Նաեւ եղբաւր մեր սիրելի
Շնորհաւք իլի Գրիգորիսի
Յ(՞)ոտս անկանիմ ամենայնի
Հայցել տեառնէ պարգեւ ձրի
Ռաբունապետիս համայն ազգի
Եւ ծնողացն իւրոց բարի
Կարապետ քահանայի եւ մաւրն Համաւորի։

---

1 Այս մասին տե՛ս Գ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Ա, Երևան, 1983, էջ 201։

2 Նույն տեղում, էջ 202։

* «ՀԱ»-ն նախորդները կարդացել են որպես թվական, մինչդեռ Գ. Հովսեփյանը կարդում է «Հայոց» և ստացվում է ՋԼԸ (1486)։

Գ. Հովսեփյանը պարզել է, որ դուռը XV դ. պատվիրել է Սևանի վարդապետարանի հիմնադիր Դանիել բարձրապետը, իսկ զարդաքանդակի հեղինակն է նրա աշակերտ Աբրահամը։ Քանդակագործը, քաջատեղյակ լինելով մանրանկարչական արվեստին, տերունական տարբեր պատկերների համատեղմամբ ստեղծել է մի գեղեցիկ զարդաքանդակ։ Դռան ճակատային մասում «Զորեքկերպյան աթոռն» է, դրանից ցած՝ բարեխոսության տեսարանը, որի ձախ կողմում պատկերված են բարեխոսներ Աստվածամայրը և Հովհաննես Մկրտիչը, իսկ աջում՝ Ստեփանոս Նախավկան ու Գրիգոր Լուսավորիչը։ Դրանից ներքև «Հոգեգալուստն» է, որից ցած, երկու կողմերում առանձին խորանների մեջ դիմաքանդակներ են, հավանաբար մեկը՝ պատվիրատուի, իսկ մյուսը Աբրահամի ինքնանկարն է կամ՝ արձանագրության մեջ նշված Ներսես եպիսկոպոսի դիմապատկերը։ Ամենաներքևում զարդհյուս վարդյակ է։ Այս ամբողջը պարփակված է զարդաքանդակ գոտիով, որի ներսի եզրերին վերոհիշյալ արձանագրությունն է։

Գ. Հովսեփյանին հետաքրքրել է նաև դռան գեղարվեստական ճոխ հարդարանքի հեղինակի ով լինելը։ Գիտնականին XV դարից հայտնի են եղել երկու Աբրահամ նկարիչներ՝ ա. Աբրահամ, որին Գ. Հովսեփյանն անվանում է Սևանեցի և համարում դռան հեղինակը, բ. Վայոց ձորի Սպիտակավոր Աստվածածին եկեղեցու գրչատան Աբրահամ ծաղկողը։ Նրանց մասին Հովսեփյանը գրում է, որ հիշյալները տարբեր նկարիչներ են, քանի որ Վայոց ձորի Աբրահամը «աշակերտ էր նույն վանքի վանահայր Ավագտեր վարդապետի և 1482, 1484, 1487 և 1498 թթ. յուր վանքում վերջին թվականին և նրանից քիչ առաջ «հռետոր» և «քաջ բարձրապետ» կոչված ուրիշների կողմից, մինչդեռ նույնանուն Սևանեցին Դանիելի աշակերտն է, առանց վարդապետական տիտղոսի և 1498 թվին Սևանումն էր»[3]։

Գ. Հովսեփյանը Աբրահամ Սևանեցուն է վերագրել Դանիել Սևանեցու պատվերով նկարազարդված Ավետարանը, որը գրվել է Աղջոց վանքում 1471 թ.[4]։ Նրա գրիչն է Վարդանը։ Այնուհետև ձեռագիրը տարվել է Սևան, որտեղ էլ քսանևյոթ տարի հետո՝ 1498 թ. Աբրահամը նկարազարդել է այն և Մատթեոս ավետարանչի նկարի ներքևում գրել. «Զ Աբրահամ նկարիչս յիշեա և ասա միշտ ողորմեա»[5]։ Իսկ Մատթեոսի Ավետարանի վերջում թողել է հետևյալ չափածոն.

Զաստուածարան մեծ բարձունին
Զ Դանիել մեկնող բանի
Զտացաւղ սուրբ մատենիս
և զաշակերտ եռամեծիս
Զ Աբրահամ անվարժ գրչիկս
Յիշել յաղօթս ձեր արժանիս
և դուք առնէք վարձս բարիս[6],

Մեկ այլ հիշատակարանում նշվում է նաև ժամանակը և վայրը.

Թվ. ՉԵԷ (1498)
Զաստուածարան մեծ բարձունի

---

3 Նույն տեղում, էջ 212—213։
4 Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. 8409։
5 Նույն տեղում, թ. 15բ։
6 Նույն տեղում, թ. 93բ։



Սևանի Առաքելոց վանքի զարդաքանդակ դուռը։

ԸզԴանիէլ քաջ և արի՝
ՆէբՆարփենի շնորհիւ իլի,
Մեկնէ զբանս համասեռի,
Նստեալ ի սուրբ Սևան կղզի
Առաքինեալ և անուանի
Լոյս ծագելով ամենայնի
Ի ժամանակս դառն և յեսինն։

Արարեր 3—5

Սա զարդարէ զեկեղեցի,
Եւ առաւել զՍեան կղզի
Ի զանազան զարդ պերճալի,
Պճնեալ ի տիպս հրճուելի,
Որպէս է այս մատեան բանի՝
Աւետարեր տեառն Յիսուսի
Եւ զսա դրել իմոյս ձեռին
Յետ այրեցմանն դիւացն աստի
Յիշման առնէք զսա արժանի
Ով ոք կարդա կամ հանդիպի
Նայև զդրչակս յետ ամենի...[7]։

Ինչպես տեսնում ենք, հիշատակարաններում նշված անձնավորությունների անունները համապատասխանում են Առաքելոց վանքի դռան արձանագրությանը. նշանակում է, իսկապես երկուսն էլ կատարել է միևնույն նկարիչը։

Այս մատյանը անհրաժեշտ է միացնել Վայոց ձորի Աբրահամի գործերին, հիմք ընդունելով նկարազարդման այն մեծ աղերսը, որ նկատվում է սույն ձեռագրի և Աբրահամ Վայոցձորեցու 1498 թ. նկարազարդած՝ Մատենադարանի № 5303 Ավետարանի միջև։ Երկու ձեռագրերն էլ մագաղաթյա են, փոքր չափերի, և որոշ խորանաղարդեր. ինչպես և Մատթեոս ավետարանչի նկարները, ունեն ճիշտ միևնույն հորինվածքները և կատարման միևնույն ոճը։ Իհարկե, սա դեռ բավարար հիմք չի տալիս ասելու, որ դրանք միևնույն նկարչի գործեր են, քանի որ մեզ հայտնի շատ վարպետներ ընդօրինակել են, մեկը մյուսից կրկնելով միևնույն հորինվածքները, չնայած նրանցից յուրաքանչյուրի մոտ այնուամենայնիվ առկա է եղել ոճական տարբերությունը։ Այստեղ մեզ պետք է օգներ տերունական նկարների համեմատությունը, սակայն Աբրահամ Սևանեցու ձեռագրում չկա և ոչ մի նկար, մինչդեռ Աբրահամ Վայոցձորեցու № 5303 ձեռագրում դրանք տասնհինգն են։ Մնում էր այդ նկարները համեմատել Առաքելոց դռան «Հոգեգալուստ» և «Զորեքկերպյան աթոռ» քանդակների հետ, բայց № 5303-ում այդ երկու նկարներն էլ բացակայում էին։ Ուրեմն մեր ձեռքի տակ եղած փաստերը դեռևս գոհացուցիչ չէին երկու նկարիչներին նույնացնելու կամ անջատելու համար։

Խնդիրը լուծելու գործում մեզ օգնում է Աբրահամ Սևանեցու նկարազարդած մեկ այլ ձեռագիր՝ Երուսաղեմի № 3230 Ճաշոցը՝ գրված 1450 թ.։ Գրիչ Գրիգորն այն ընդօրինակել է դարձյալ Դանիելի պատվերով[8]։ Ձեռագրի գրությունը սկսվել է էջմիածնում, ավարտվել՝ Բյուրականում։ Դանիելը այն նվիրել է Սևանի ս. Առաքելոց եկեղեցուն։ Գրչի հիշատակարանում նկարազարդման մասին խոսք չկա։ Ձեռագրի վերջին ստացող Ղասապօղլի Սարգսի 1491 թ. գրած հիշատակարանում ասված է, որ գիրքը գտնվել է Հացունյաց երկրի Հասանդալա մայրաքաղաքում և հիշված է նրա նկարազարդման մասին. «Զայս հոգեւոր, յոսկիազարդ եւ ծաղկաւետ, վարդափթիթ բուրաստանի տեսեալ և ցանկացաւղ եղեալ...»[9]։ Նշանակում է, ձեռագիրը նկարազարդվել է 1450-ից (գրության թիվը) հետո և 1491-ից առաջ։ Ճաշոցում պահպանված են երկու խորանաղարդեր (թ. 365, 551), բազմաթիվ գլխազարդեր և երեք տերունական նկարներ՝ «Խաչելություն», «Հարություն» (թ. 364) և «Հոգեգալուստ» (թ. 550)։

---

7 Նույն տեղում, թ. 13բ։ Ձեռագիրը վերստին նորոգվել և կազմվել է 1640 թ., Կարինում։ Արծաթապատ կազմը, որ փակցված է նախկին դրոշմազարդ կաշեկազմի վրա, պատրաստվել է 1641 թ.։

8 Սույն ձեռագրի մասին առաջին անգամ տեղեկացնում է Ա. Ղազարոսյանը [տե՛ս Ա. Ղ ա զ ա ր ո ս յ ա ն, Դանիել բարունապետը և Սևանի դպրոցը («Պատմա-բանասիրական հանդես», 1986, № 3, էջ 99)]։

9 Ն. Պ ո ղ ա ր յ ա ն, Մայր ցուցակ ձեռագրաց սբ. Յակոբեանց, հ. 9, Երուսաղեմ, 1979, էջ 546։

Առաքելոց դռան վրա պատկերված «Հոգեգալստի» համեմատությունը Ճաշոցի նկարի հետ ցույց է տալիս, որ դրանց հորինվածքները համարյա նույնությամբ կրկնված են, պատվիրատուների նկարներով հանդերձ։ Ճաշոցում այս նկարի տակ կա նկարչի չափածո հիշատակարանը, որը վերաբերում է նկարի բովանդակությանը, իսկ սկզբնատառերով կարդացվում է «Աբրահամ, Դանիէլ վարդապետ». այստեղից էլ հայտնի է դառնում, որ Ճաշոցը նկարազարդել է միևնույն Աբրահամ Սեանեցին։

Ճաշոցի «Խաչելություն» և «Հարություն» նկարները հորինվածքային շատ մանրամասներով (կերպարները, խորքի զարդամոտիվները, նույնիսկ՝ պատկերների մոտ լուսանցքներում գրված նրանց բացատրությունները) նման են Վայոց ձորի մանրանկարիչ Աբրահամի № 5303 Ավետարանի միևնույն նկարներին։ Այս ամենից բացի, Ճաշոցի «Հարություն» պատկերի ներքևում գրված չափածո տողերը գրեթե նույնությամբ կրկնված են № 5303-ի միևնույն նկարի տակ, որի սկզբնատառերը հոդում են «Աբրահամ»։

Այս յարութիւն է Քրիստոսի	Այս յարութիւն է Քրիստոսի
Քանն որ յարեաւ մէջ գիշերի	Բանն որ յարեաւ մէջ գիշերի
Բամ աւետեաց գայր լսելի,	Բաս աւետեաց գայր լսելի
Առ սուրբ կանայսն սքանչելի։	Առ սուրբ կանայսն սքանչելի.
«Յարեաւ, չէ, աստ, է կենդանի	«Յարեաւ չէ աստ, է կենդանի
Հասեալ խնդրէք նման մեռելի»—	Հասեալ խնդրէք նման մեռելի»—
Ասէր հրեշտակն լուսափայլ,	Ասաց հրեշտակն լուսափայլ,
Մարիամու Մագդալենի	Մարիամու Մագդալենի,
Իսկ Յիսուս երևելով	Իսկ Յիսուսի երևելով,
Որ եւ տեսեալ Մարիամի	Որ եւ տեսեալ Մարիամի,
Երթալ պատմել ասէ եղբարցն	Փութա ասէ պատմել եղբարցն
Գալ տեսանել ի Գալիլէ[10]։	Գալ տեսանել Գալիլէի[11]։

Այսպիսով, կասկած չկա, որ երկու ձեռագրերի մանրանկարները միևնույն վարպետի ստեղծագործություններ են։ Հետևաբար, կարող ենք ասել, որ Սևանի Առաքելոց վանքի հարավային դուռը կերտող նկարիչ-քանդակագործ Աբրահամը, որին Գ. Հովսեփյանը անվանում է Սեանեցի, Վայոց ձորի Սրկըղուն գյուղի (այժմ՝ Բաշքենդ) Բոլորբերդ անապատի նկարիչ և բարունապետ Աբրահամն է։ Գ. Հովսեփյանը երկու Աբրահամների տարբեր անձնավորություններ լինելը հիմնականում պատճառաբանում է նրանց միևնույն թվականին՝ 1498 թ., տարբեր վայրերում գտնված լինելու մեջ։

Այժմ տեսնենք, թե ո՞վ էր Աբրահամը և որտե՞ղ էր գտնվում այդ թվականին։ Հայ գրչության պատմության մեջ զգալի դեր է կատարել և բավականին հեղինակություն վայելել Վայոց ձորի Սրկղուն գյուղի Բոլորբերդ կամ Բոլորաձոր անապատի գրչատունը։ Սրկղուն գյուղը Պռոշյանների իշխանական նստատեղին էր՝ նրանց հոգևոր և մտավոր կենտրոնը։ Վանքի հիմնադրումը եղել է, երբ կառուցվել է նաև Սպիտակավոր Աստվածածին եկեղեցին, որին կից գործել է գրչատունը։ Բոլորբերդի գրչատան գործունեությունն ուժեղացել է XV դ. երկրորդ կեսին, վանքի առաջնորդ Ավագտերի օրոք։ Վերջինս հիշվում է նաև որպես բանաստեղծ, գրիչ ու վարդապետ։ Շատերի հետ միասին Ավագտերի մոտ կրթություն են ստացել նաև նրա եղբոր՝ Տերտերի որդիները, որոնցից Դավիթը և Զաքարիան հետագայում դարձան շնորհալի գրիչներ, իսկ Աբրահամը՝ անվանի նկարիչ-քանդակագործ և բարունի։

Աբրահամի անունը առաջին անգամ հանդիպում է իր ավագ եղբոր՝ Դավթի 1461 թ. ընդօրինակած Ավետարանում, բայց այդտեղ չի հիշվում նրա ծագումը լինելու մասին։ Ձեռագիրն ունի ոչ վարժ նկարազարդում. «Ո՛վ եղբարք,

10 Երուսաղեմ, Ս. Հակոբյանց մատենադարան, ձեռ. 3290, թ. 364։

11 ՄՄ, ձեռ. 5303, թ. 10բ։

մեղադիր մի լինէք փոքր ծաղկիս, զի ի վարդապետէ չի ուսել և արճիճ չկայր»[12]։ Հնարավոր է, որ նկարազարդել է Աբրահամը, երբ դեռ մասնագիտական կրթություն չէր ստացել։ Սկզբնական ուսումնառությունը ստանալով իր հորեղբոր՝ Ավագտեր վարդապետի մոտ, այնուհետև նա, հավանաբար, եղել է Հերմոնի վանքում։ Այդ մասին են վկայում Աբրահամի 1482 թ. նկարազարդած Ավետարանի չափածո տողերը, որոնցում նա հիշում է իր ուսուցիչներին.

Եւ բարունեացս ցանկալի
Մեծն Սարդիս յոյժ գովելի
Եւ ի սորին աշակերտի՝
Աւագտերի և Յակոբի
Էւ Եսայի Նորաբուսի
Որ են շնորհօք հոգոյն ի լի[13]։

Հիշված Հակոբը և Եսային Հերմոնի գրչատան հարգված բարոնիներից էին։ Եսային նկարիչ էր և, ինչպես երևում է, Աբրահամը մասնագիտության մեջ խորացել է աշակերտելով նրան։ Հերմոնի գրիչ Անանիայի 1469 թ. ընդօրինակած Ավետարանը, հնարավոր է, որ նկարազարդած լինի Աբրահամը, երբ ուսանում էր այնտեղ, որովհետև ձեռագրի հարդարման մեջ զգացվում է նրա ոճն ու հորինվածքների յուրովի ձևավորումը[14]։

Բոլորբերդում Աբրահամի նկարազարդած ձեռագրերը պատկանում են 1474—1487 թթ.[15]։ 1474 թ. Հայսմավուրքն ընդօրինակված է տարբեր գրիչների կողմից, տարբեր վայրերում. «Գ (3) տեղ է գրած յ/Ե/ղեգիս, Հերմոնի վանք, Աստուածածնումն էս տեսրս»[16]։

Աբրահամն իր կրթությունը պետք է որ շարունակած լինի Սևանում՝ Դանիել բարունապետի մոտ, որը և 1486 թ. Աբրահամին հանձնարարել է զարդաքանդակել Առաքելոց վանքի դուռը։ Աբրահամն այստեղ նկարազարդել է նաև Երուսաղեմի Ճաշոցը, 1491-ից առաջ։ 1488 թ. Աբրահամը, հավանաբար, եղել է Տփխիսում և նկարազարդել է գրիչ Մկրտիչի ընդօրինակած Ավետարանը։ Գրիչը նրա մասին նշում է. «զքաջ վարդապետն Աբրահամ նկարող և զկազմող սորա»[17]։ Ձեռագրի մանրանկարների համեմատությունը Վայոց ձորի Աբրահամի գործերի հետ համոզում են, որ դրանք միևնույն նկարչի աշխատանքներն են։ Ավելին. № 5303 ձեռագրի տեքստում տեղադրված նկարներն իրենց յուրահատուկ ձևավորմամբ զարմանալիորեն հիշեցնում են Տփխիսի նկարիչ Մանուելի 1445 թ. նկարազարդած Ավետարանի տերունական որոշ նկարներ[18], ուստի Աբրահամը պետք է որ տեսած լիներ դրանք։ 1493 թ. Աբրահամը նկարազարդել է մի Ավետարան, որի վայրն ու գրիչն անհայտ են։ 1495 թ. Աբրահամը դարձյալ Սյունիքում էր՝ Վերին Նորավանքում, որտեղ գրիչ Գրիգորը նրա համար ընդօրինակեց մի Ավետարան. «զԱբրահամ քաջ բարունապետ ստացող սուրբ Աւետարանիս»[19]։ Սա Մատենադարանի № 5303 Ավետարանն է, ուր Մատթեոս ավետարանչի նկարի ներքևում Աբրահամը թողել է հետևյալ

---

12 ՄՄ, ձեռ. 6860, թ. 133ա։ Արճիճը մանրանկարչության մեջ օգտագործվել է ուրվանկարելու համար։

13 Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Գ, Երևան, 1967, էջ 27։

14 Էջմիածին, Մայր Աթոռի մատենադարան, ձեռ. 322։

15 ՄՄ, ձեռ. 6268, 2634, 221, 942, 7770, 6273։

16 ՄՄ, ձեռ. 6268, թ. 394բ։

17 Էջմիածին, Մայր Աթոռի մատենադարան, ձեռ. 129, թ. 224ա։

18 ՄՄ, ձեռ. 5784։ Ձեռագիրը 1293 թ. ընդօրինակվել է Կիլիկիայում։ Որոշ նկարներ արել է նկարիչ Սիմոնը։ Տփխիսում Մանուելը ավելացրել է տերունական նկարները և որոշ լուսանցազարդեր։

19 ՄՄ, ձեռ. 5303, թ. 126ա։

գրությունը. «Զանարժան Աբրահամ ստացիչ և նկարիչ սուրբ Աւետարանիս հանդերձ ծնողաց և վարդապետաց յիշեսջիք...» (թ. 29բ)։ Իրեն պատկանող այդ ձեռագրի նկարազարդումն Աբրահամը սկսել է 1496 թ. Տաթևում. «Թվին Ջխե (1496) Ստաթէի վանքս ծաղկեցաւ»[20]։Շատ հնարավոր է, որ այդ տարիներին նրան իբրև բարձրակարգ հրավիրած լինեին Տաթև[21]։ Աբրահամի այս ձեռագիրը մեզ հայտնի վերջին գործն է, որի նկարազարդումը տևել է շուրջ յոթ տարի՝ 1496—1502 թթ.։ Բայց արդյո՞ք այդ յոթ տարիները նա անցկացրեց միայն Տաթևում։ Ինչպես տեսանք, 1498 թ. նա նկարազարդել է Դանիել Սևանեցու Ավետարանը։ Նշանակում է, նկարիչն իր կապերը չէր խզել Բոլորբերդի ու Սևանի գրչատների հետ և միաժամանակ նկարազարդել է երկու ձեռագրերն էլ։

Աբրահամը № 5303 ձեռագրի տերունական նկարները ավարտած պետք է լինի 1498 թ.։ Այդ է վկայում «Քրիստոսի երկրորդ գալուստը» պատկերի ցաոում եղած չափածո տողերի վերջում նշված թվականը՝ 1498։ Հետագա տարիներին, մինչև 1502 թ., նկարիչը շարունակել է ձեռագրի մնացած հարդարանքը, իսկ այդ ընթացքում (1500 թ.) նա նկարազարդել է ևս մեկ ձեռագիր՝ Մատենադարանի № 1579 Շարակնոցը, որի ընդօրինակման վայրն անհայտ է։

Տարբեր վայրերում Աբրահամի լինելը, ինչպես և տարբեր դպրոցներում սովորելը, անշուշտ իր ազդեցությունն է թողել նրա արվեստում։ Ուշագրավ է, որ Բոլորբերդում ընդօրինակված թղթյա մատյանների նկարազարդումներն անհամեմատ ավելի թույլ գործեր են և բացի այդ ոճական առումով նման չեն միմյանց։ Եթե այդ ձեռագրերում պահպանված չլինեին նրա մասին տեղեկություններ (ծնողների, հարազատների անունները), հեշտությամբ նրանցից յուրաքանչյուրը կարելի էր համարել առանձին նկարչի ձեռքի աշխատանք։ Հակառակ դրա, ուշ շրջանի գործերում զգալի նմանություն է նկատվում։ Եվ թեև մագաղաթի վրա աշխատելն անհամեմատ ավելի դժվար էր, այդուհանդերձ Աբրահամը հանդես է եկել իբրև հասուն արվեստագետ, իբրև՝ «քաջ բարձրապետ»։ Նրա վերջին գործերը թե՛ իրենց հորինվածքային կառուցվածքով և թե՛ ոճական առումով խիստ հարազատ են միմյանց։ Աբրահամի դիմապատկերները նրբագեղ են, մշակված գեղագիտական հմտությամբ։ Գունազարդման տեխնիկան նույնպես հասել է մեծ վարպետության. հագեցված ու ներդաշնակ գունաշարին օգնել է ոսկու համադրումը։ Եթե Աբրահամի սկզբնական շրջանի գործերում նկատվում են Գլաձորի համալսարանի մանրանկարչության և, մասնավորապես, Թորոս Տարոնացու արվեստի ազդեցությունը, ապա ուշ շրջանի գործերը, ինչպես նկատել է Գ. Հովսեփյանը, աղերսվում են «Պիծակյանը հիշեցնող» նրբագեղ զարդամոտիվների հետ[22]։

Աբրահամի արվեստի ճանաչմանն ու գնահատմանը մեծապես օգնում է № 5303 ձեռագրի հարդարանքը և հատկապես նրա տերունական նկարների հարուստ շարքը։ Ձեռագրի սկզբում տեղադրված են տասներկու պատկեր։ Դրանք ունեն խիստ անկանոն դասավորություն. պետք է ենթադրել, որ հերթականությունը խախտվել է հետագա վերանորոգման ժամանակ[23]։ Երեք նրկար տեղադրված են տեքստի հետ՝ համապատասխան տեղերում. դրանք են «Ծնունդ» (34ա), «Մկրտություն» (37բ), «Քրիստոսն աշակերտների հետ» (41ա)։ Կանոնիկ նկարների շարքից սրանց բացակայության մասին նկարիչը զգուշացնում է «Ընծայումն» նկարի վերին լուսանցքում. «Ծնունդն և մկրտու-

20 Նույն տեղում, թ. 193բ։

21 Ա. Միրզոյանը Տաթևի նկարիչների շարքում ներկայացրել է նաև Աբրահամին (տե՛ս А. Мирзоян, О группе иллюстрированных рукописей (XIV—XV вв.) Татевского монастыря (автореферат), Ереван, 1972, с. 13:

22 Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պոռշյանք հայոց պատմության մեջ, Անթիլիաս, 1969, էջ 358։

23 Ձեռագրի հետագա հիշատակարանները պատմում են, որ այն տարվել է Ստամբուլ, իսկ XVII դ. եղել է Վարագա ս. Խաչ վանքում։

թիւն ի Մատթէոս գլուխն գիտ իւր տեղն»։ Ձեռագրի հարդարման այս ձևը, որ շատ հարազատ էր դարձել կիլիկյան արվեստին, մուտք էր գործել Գլաձոր և, ինչպես տեսնում ենք, փորձել է կիրառել նաև Աբրահամը։ Որոշ նկարներ հետաքրքրական են ոչ միայն իրենց ձևավորմամբ, այլև պատկերագրման տարբերակով. օրինակ, «Խորհրդավոր ընթրիքում» Քրիստոսի հետ սեղանի շուրջը նկարված են ոչ թե տասներկու, այլ տասներեք առաքյալներ։ Այստեղ նրկարիչը Հուդային ներկայացրել է երկու անգամ, տարբեր գործողության մեջ՝ ա. սեղանին հակված և ձեռքերը մեկնած ամանին, բ. Քրիստոսը պատառը տալիս է Հուդային։ Նկարի տակ կա նրա բովանդակությունը արտահայտող նկարչի հորինած չափածոն, որը վերջանում է այսպես.

«Առեալ զպատառն տայ Յուդային
Մատնեալ զմատնողն վարդապետին»[24]։

Մանրանկարչության մեջ այդ երկու տարբերակներն էլ կան, բայց ոչ միաժամանակ։

Ամփոփենք. Սևանի Առաքելոց վանքի հարավային դռան քանդակագործը եղել է Վայոց ձորի Սրկոնն գյուղի Բոլորբերդ անապատի XV դ. երկրորդ կեսի մանրանկարիչ Աբրահամը։ Ասենք նաև, որ նրա նկարազարդած ձեռագրերից տասը գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում[25], մեկը՝ Երուսաղեմում[26], մեկը՝ Վիեննայում[27] և երկուսը՝ Էջմիածնի Մայր Աթոռի մատենադարանում[28]։ Աբրահամը իր վերջին և արժեքավոր գործը ստեղծել է Տաթևում, երբ արդեն ճանաչված էր որպես «քաջ բաբունապետ»։ Աբրահամի կնրտած Սևանի Առաքելոց եկեղեցու դուռը լրացուցիչ և կարևոր մի փաստ է, որը գալիս է հարստացնելու նկարչի արվեստի մասին մեր իմացությունը և հնարավորություն է տալիս նրան համարելու XV դ. Սյունիքի լավագույն արվեստագետներից մեկը։

ХУДОЖНИК-СКУЛЬПТОР АБРААМ

АСТХИК ГЕВОРКЯН

Резюме

В Историческом музее Армении хранится украшенная рельефами дверь Севанского монастыря Аракелоц, изготовленная в 1486 году мастером Абраамом по заказу настоятеля монастыря и рабунапета Даниела Севанеци.

Гарегин Овсепян, во избежание отождествления этого Абраама с одноименным художником XV в., работавшим в обители Болорберд, назвал первого из них Севанеци. Исследования показали, что Абраам Севанеци и Абраам Болорбердци—одно и то же лицо. Это был умелый мастер, занимавшийся как иллюстрированием рукописей, так и скульптурными работами.

---

24 ՄՄ, ձեռ. 5303, բ. 3ա։

25 ՄՄ, ձեռ. 221, 942, 1579, 2634, 2781, 5303, 6268, 6365, 7770, 8409։

26 Երուսաղեմ, Ս. Հակոբյանց մատենադարան, ձեռ. 3230։

27 Վիեննայի Մխիթարյան մատենադարան, ձեռ. 403։

28 Էջմիածին, Մայր Աթոռի մատենադարան, ձեռ. 129, 322։